ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՈՒՄԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիները շինարարական վերելքի նոր ժամանակաշրջան էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կյանքում: Հետխորհրդային զարգացումները եւ կրոնական հարցերում ընձեռված ազատությունը, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունները՝ շինարարական մեծ ալիք բարձրացրին, որն առավելագույնս դրսեւորվեց շնորհիվ Գարեգին Բ. Կաթողիկոսի բանիմաց գործունեության: Նրա շինարարական գործունեության արդյունքը նկատելի ներդրում է ժամանակակից հայկական ճարտարապետության մեջ, ակնհայտ են հայոց անկախության տարիների ճարտարապետական մշակույթի նոր վերելքի նշանները: Նորակառույցներից բացի մեծ թիվ են կազմում նաեւ խորհրդահայ ժառանգության մի շարք կառույցների պահպանությունն ու օգտագործումը բարեսիրական նպատակներով: Ավելին, ակնարկվող շինարարական միջոցառումները հույժ կարեւորություն ունեն եկեղեցական եւ հոգեւոր կառույցների դեռեւս չկայունացած շինարարական նորմերի կայացման եւ կատարելագործման հարընթացում: Հայկական արդի ճարտարապետությանը վերաբերող գրականությունը բացարձակապես նվիրված է խորհրդահայ իրականությանը, որտեղ ոչ մի անդրադարձ չկա սփյուռքահայ գաղթօջախների ճարտարապետական ժառանգությանը եւ մանավանդ՝ եկեղեցական ու հոգեւոր շենքերի ճարտարապետությանը: Փաստորեն գրականության մեջ գոյություն ունեցող փվյալ բացի լրացումը արդիական է:

Գարեգին Բ. Կաթողիկոսի շինարարական գործունեության շրջագիծն ընդգրկում է երեք ուղղություն: Այդ թվում՝ Մայր Աթոռի հայաստանյան եւ սփյուռքի թեմերում կատարված շինարարական գործունեությունը: Հայրենական թեմերում հաշվառվում են՝ 130-ից ավելի եկեղեցի ու հոգեւոր նորակառույց շենքեր, նույնքան մեծ ու միջին չափերի նորոգման միջոցառումներ, ինչպես եւ հինգ տասնյակի հասնող աշխարհիկ կառույցներ: Այնուամենայնիվ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հզորագույն ճարտարապետաշինարարական մտահղացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համալիրի ռեգեներացիան եւ



Նկ. 1

Նկ. 2

հարմարեցումն է արդի կյանքի պահանջներին: Այսօր Մայր Աթոռի տարածքում կառուցված կամ կառուցվող 30 շենքերից 15-ը Գարեգին Բ. Հայրապետի գահակալության տարիների ծրագրեր են, որ ներառում են ինչպես հին շենքերի բարենորոգումներ, նույնպես եւ նոր շենքերի կառուցում, որոնք ըստ էության կատարելագործեցին Մայր Աթոռի կառուցապատումը հինգ գաղափարական եւ գործառական միջավայրային գոտիների:

Ա. Առաջինն ընդգրկում է՝ Մայր Տաճարը եւ նրա շրջակա տարածքը կամ վանական բակը (նկ. 1). Այս գոտին Մայր Աթոռի հնագույն եւ սկզբունքային մասն է եւ համալիրի կորիզը: Սա անսամբլի հորինվածքի կենտրոնն է, որի գաղափարական գլխավոր տարրը կամ հիերարխիան հենց Մայր Տաճարն է: Ընդ որում ծավալների ու շրջակա մյուս գոտիների հորինվածքային առանցքները խաչաձեւվում են Մայր Տաճարի գմբեթի շուրջ՝ հյուսիս-հարավ, արեւելք եւ արեւմուտք ուղղություններով: Մայր Տաճարն ու իր բակը համալիրաստեղծ գործոն են, որ մինչեւ Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեությունը անցել են չորս սկզբունքային փուլերով: Հինգերորդ փուլը Գարեգին Բ. Կաթողիկոսի օրոք է, որ կատարվեց ԻԱ. դարում, երբ միջավայրը հարստացավ նորակառույց Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան Մամիկոնյան Մկրտարանով: Այս հավելումը՝ բակի արեւելք-արեւմուտք առանցքի հետ ընդգծեց նաեւ հյուսիս-հարավ ուղղությունը, որ մինչ այդ թույլ էր արտահայտված: Այսպիսով, առավել եւս հստակացավ վանական բակի բնագրային պատկերը: Փաստորեն, վանական բակի կերտվածքում առավել հնչեղ դարձավ ներքին պարագծի փռվածքի անսամբլայնությունը, որտեղ բովանդակ շենքերի հատակագծային եւ տարածական հորինվածքային կապը Մայր Տաճարի հետ իրագործվեց կանաչապատման եւ ճարտարապետական փոքր ձեւերի միջոցով:

Բ. Երկրորդ մասն ընդգրկում է՝ Գեւորգյան հոգեւոր-ճեմարան համալսարանը կամ կրթական գոտին եւ շրջակա համակառույցները (նկ. 2). Այս գոտին հինգ ենթահամակառույցների միջեւ տարածվող մուտքային հրապարակ է: Իրականում վանքի պարիսպներից դուրս ծավալված տվյալ գոտին ստեղծվելով դեռեւս ԺԹ դարի երկրորդ կեսին, Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի շինարար Կաթողիկոսի ջանքերով որպես բարձրագույն հոգեւոր ուսումնառության կենտրոն՝ իր պերճանքին հասցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հոգածությամբ: Համալիրն ընդհանուր առմամբ զարգացնում է վանական բակի հորինվածքը: Նրա արեւելք-արեւմուտք առանցքը, սկսվելով Գրիգոր Լուսավորչի դարպասից, արեւմտյան կողմով շարունակարար երկարում է դեպի Մայր Տաճարի նույն առանցքը, իսկ արեւելյան կողմով ընդարձակվում է դեպի Արարատյան փողոցի մյուս կողմը: Փաստորեն, այս առանցքը գպարանի շենքի եւ Երեմյան խցերի միջեւ անցնող փողոցով միանում է վանական բակին եւ ստեղ-

ծում է երկու գոտիների հորինվածքի կենտրոնների օղակավորում: Վազգենյան դարպասից դեպի Ս. Գայանե ընթացող փողոցը մեր օրերի մտահղացում է: Այն փոխուղղահայաց լինելով Մայր Աթոռի արևելք-արևմուտք առանցքին, միաժամանակ զուգահեռ է Մայր Տաճարի տրանսեպտային առանցքին: Ստացվում է, որ ուսումնական գոտին դեպի վանական բակը տանող նախահրապարակ է, որի կառուցապատման բաղկացուցիչներն են նորոգվող Երեմյան խցերը, ուսանողական հանրակացարանը, Գևորգյան ասպվածաբանական համալսարանի համակառույցը, նորակառույցներ՝ Բաց խորանը, Վաչե եւ Թամար Մանուկյանների անվան Նոր մատենադարանը, զբոսաշրջիկների սպասարկման ճաշարանի շենքն ու տպարանը: Ուսումնասիրվող գոտու կերպարի ստեղծման մեջ գլխավորը Գևորգյան հոգևոր ճեմարանի համակառույցն է, որ շահեկանորեն միահյուսում է Գևորգյան ճեմարանը, նորակառույց՝ մարզական եւ հանդիսությունների դահլիճների երկհարկ շենքը եւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Վերջին համակառույցը իր նորարար ձեւակերտմամբ միջավայրում միանգամայն հնչեղ է դարձնում ուսումնական կերպարը: Սա Գարեգին Բ. Հայրապետի նոր մտահղացման ճարտարապետական մարմնավորումն է, որ ընթանում է դեպի զարգացած ասպվածաբանական համալսարանական կենտրոնի ստեղծումը: Այս առումով նշված շենքերի հետ կարեւոր է նաեւ դեպի Ս. Գայանեի վանք ընթացող ճանապարհին՝ Էջմիածնի հայորդյաց տունն ու նախատեսվող 750 աշակերտի համար Էօրնեքյան դպրոցը, ինչպես նաեւ ոչ հեռու տարածքում նախատեսվող Գարեգին Ա. Կաթողիկոսի անվան կրթական կենտրոնը:

Գ. Երրորդ մասն ընգրկում է՝ Նոր վեհարանի գոտին (նկ. 3). Վեհարանը ի սկզբանե Մայր Տաճարի անմիջական հարակից կառույցն է եղել, նրանք միասնաբար կազմել են Մայր Աթոռը: Տվյալ հանգամանքը վերամրագրվեց Ղազար Ջահկեցի շինարար Կաթողիկոսի՝ Հին վեհարանի շենքի կառուցմամբ 1741 թ.: ԺԹ դարում կառուցված կաթողիկոսական գրասենյակի մասնաշենքն ու Հայրիկյան թանգարանը ազդակներ էին Մայր Աթոռի ընդարձկմանը դեպի արեւմուտք, որ իրականություն դարձավ դեռեւս Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյան Կաթողիկոսի գաղափարով եւ կառուցվեց Գեորգ Ե. Տփխիսեցի Կաթողիկոսի գահակալության տարիներին: Շենքի բարերարն է մեծանուն Ալեքսանդր Մանթաշյանը, իսկ ճարտարապետը՝ Պողոս Ջոհրաբյանը: Բնականաբար, Վեհարանի գոտու ստեղծման գործում որոշիչ է նրա տեղադրությունը հենց Մայր Տաճարի առանցքով: Տվյալ հանգամանքը ստեղծագործաբար շարունակվեց Վազգեն Ա. Կաթողիկոսի օրոք: Նորովի վերակառուցվեց Տրդատա դարպասը, որ հանդիսավորություն հաղորդելով հանդերձ՝ կապող օղակ դարձավ վանական եւ Վեհարանի բակերի միասնական տարածության ստեղծման գործում: Այստեղ Վազգեն Ա. Կաթողիկոսի նախաձեռնությամբ կատարված

Նկ. 3

Նկ. 4

բարեւորոգչական եւ բարեկարգման աշխատանքների հետ առանձնապես պերճաշուք միջոցառում էր 1982 թ. Բաղդասար Արզումանյանի նախագծով իրականացված Ալեք եւ Մարի Մանուկյանների անվան Գանձատունը: Վեհարանական բակի փարածության կատարելագործումը շարունակվեց Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալության տարիներին: Համալիրում 2004 թ., Վեհարանից հյուսիս կառուցվեց նոր դիվանատունը, անմիջապես Վեհարանի եզերում կառուցման ընթացք մտավ հանդիսությունների դահլիճի մասնաշենքը եւ ավելացվեց «պաշտոնական դարպասը», որ հարակից է Հայրիկյան թանգարանին: Վերականգնվեց Հին վեհարանի շենքը եւ հարմարեցվեց որպես թանգարան ու Վեհափառի առանձնատուն: Այսպես վեհարանական բակում ստեղծվեց երեք թանգարաններից կազմված համակառույց: Բակի պարագծային կառուցապատումը 2011 թ. ամբողջացվեց շինարարական փոքր, բայց անսամբլային առումով անհրաժեշտ երկու լրացումով եւս, դա հաշվապահության շենքի հյուսիսային ուղղությամբ ընդարձակումն է, իսկ մյուսը՝ բարձրաստիճան հոգեւորականների հյուրատունն է, որ իրականացվում է Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի ժամանակներում կառուցված Հին վեհարանի շարունակությունը կազմող երկհարկ սենյակների տեղում: Սա լրացնում է Վեհարանի բակի հարավ-արեւմտյան անկյան կառուցապատումը, որ գտնվում է Հին վեհարանի եւ միաբանական կացարանների միջեւ:

Դ. Չորրորդ մասն ընդգրկում է՝ Միաբանական փարածքը կամ կացարանային գոտին (նկ. 4). Մայր Աթոռի փարածքի կարեւորագույն համալիրներից մեկը: Միաբանական կացարանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի օրոք ընդգծված կերպով մեծացվեց, դարձավ Մայր Տաճարի բակի շուրջ ծավալվող ուսումնա-հասարակական ու Վեհարանի գոտիները ամբողջացնող նոր գոտի: Երեք հաջորդական բակերից կազմված այս համակառույցը, ժառանգորդական ըմբռնում ունի: Այստեղ իրար միացվեցին հյուրատունը, Ղազարապատը՝ միաբանների բոլոր հարմարություններով օժտված շուրջ 100 առանձնասենյակներով: Տվյալ համալիրի շուրջ հետաքրքիր ձեւով խմբավորվել են հինն ու նորը: Կացարանների համակառույցի հարավային կողմով բացված երկար եւ ուղղագիծ ճանապարհը ստեղծելով հետաքրքիր հեռանկարային խորք՝ գործառական իմաստով շատ հմուտ լուծում է: Փաստորեն, այն առանց խանգարելու Մայր Աթոռի մյուս փարածքների հետիոտն շարժումը՝ կազմակերպում է միաբանական կացարանների ու Վեհարանի մեքենաների մոտեցումը: Առավել եւս՝ նրա միջոցով միանգամայն բնական միասնություն է հաստատվում կացարաններից դեպի հարավ գտնվող՝ մեքենաների եւ այլ օժանդակ տնտեսությունների մասնաշենքի հետ, ինչպես նաեւ Մայր Աթոռի մի այլ ժառանգորդական գոտու՝ Ներսիսյան անտառի ու լճի հետ: Ակնարկվող ճանապարհի կարեւորությունը ավելի պարզաբանած կլինենք, եթե նշենք, որ այն երկարելով Վեհարանի ուղ-

դությամբ, կարող է ձգվել դեպի Վեհարանի բակի ու հանդիսությունների դահլիճի արևմտյան կողմում ստեղծված նորակառուց մանկական խաղավայրը, որ մեծ պերճանք է հաղորդում Մայր Աթոռի բովանդակությանը:

Ե. Տնտեսական եւ օժանդակ շենքերի տարածքը կամ տնտեսական գոտին (նկ. 5). Նույնպես Գարեգին Բ. Կաթողիկոսի շինարարական գործունեության արգասիքն է: Այն զարգացնում է նման հարմարություններով ստեղծված տարածքը՝ վերածելով դրանք պարփակ համակառույցի, որ ընդգրկում է կառատները, տնտեսական պահեստները, պոմպակայանը, էլեկտրական ենթակայանը, ջրային տնտեսությունը եւ այլն: Օժանդակ հարմարությունների այսպիսի տեղաբաշխումը հեռանկարային լուծում է, որ բավարարելով Մայր Աթոռի կարիքները, միաժամանակ կարող է ծառայել դեպի հարավ եւ արեւմուտք ծավալվող այգեպատ տարածքների բարեկարգմանը: Եւ եթե Բաց խորանի հրապարակը սկիզբ է տալիս Մայր Աթոռի տարածքում հետիոտն շարժման համար, որ տանում է դեպի վանական բակն ու մյուս գոտիները, ապա օժանդակ տնտեսության առաջ ստեղծվող հանգույցը կազմակերպում է համալիրի մեքենաների շարժման ցանցը, որ չի խանգարում հետիոտնին:

Եզրակացություններ (նկ. 6).

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման զարգացման հինգերորդ փուլն է:

- Մայր Աթոռի տարածքը ընդարձակվեց շուրջ 3,5 անգամ: Նորակառույց 15 շենքերի եւ նորոգված ու ընդարձակված շենքերով կառուցապատումը ստեղծագործաբար խտացվեց եւ տիպաբանականորեն ամբողջացվեց:

- Մայր Աթոռի ընդարձակված տարածքը բաժանվեց հինգ գոտիների, որոնցով կազմված հորինվածքային համակարգի զարգացումը կատարվեց ժառանգորդական սկզբունքով:

- Մայր Աթոռի համալիրի գլխավոր գաղափարական տարրն ու հորինվածքի կենտրոնը Մայր Տաճարն է: Գլխավոր առանցքներն են՝ Գրիգոր Լուսավորչի դարպաս-Մայր Տաճար եւ Նոր վեհարան, ինչպես նաեւ Վազգենյան դուռով ընթացող պողոտայի ուղղությունները: Հորինվածքային հատկանիշներն ու օրինաչափությունները ղեկավարվում են քարի ճարտարապետության հատկանիշներով, որտեղ երկհարկ գծային կառուցապատման շարակարգում ընդգծվում են առանձին կառույցները:

- Մայր Աթոռն իր նոր բովանդակությամբ դարձավ Հայոց մերօրյա Վեհափառի Հաւատով կառուցեալ մտավոր եւ հոգեւոր հզոր կաճառը, որ ոչ միայն սատարում է ազգային ծրագրերին, այլեւ հայագիտական հետազոտական եւ ուսումնական մեծագույն կենտրոն է:

Նկ. 5


Ա
Գ
Բ
Դ
Ե
1 - ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
2 - ՎԵՀԱՐԱՆ
3 - ԲԱՑ ԽՈՐԱՆ
4 - ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ
5 - ԵՐԵՎՄՅԱՆ ԽՑԵՐ
6 - ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՈՒՏԱՐԱՆ
7 - ՀՈԳԵՎՈՐ ՍԿԱՅԵՍԻԿ
8 - ՄԿՐՏԱՐԱՆ
9 - ԳՐԱՍԵՆՅԱԿ
10 - ԴԻՎԱՆԱՏՈՒՆ
11 - ԳԱՆՁԱՏՈՒՆ
12 - ԽՐԻՄՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
13 - ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆ
14 - ՍԵՂԱՆԱՏՈՒՆ
15 - ՀԻՆ ՄԿՐՏԱՐԱՆ
16 - ԿԱՆԱՏՈՒՆ
17 - ՏՊԱՐԱՆ
18 - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑ
19 - ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ
20 - ՄԻԱՔԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐ
21 - ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀԵՍՏՆԵՐ
22 - ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
23 - ԵՂԻՇԵ ՄԱՆՈՒՉՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
24 - ՍՐԲՈՑ ՀՈՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻ
25 - ՃԵՄԱՐԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԼԻՔ
26 - ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԼԻՔ
27 - ՄԻԱՔԱՆԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Նկ. 5